

միթէ չըսեր պատմութիւնն թէ երկնային է քու ծնունդդ :

— Ի բաց թողունք այդ բաները, — ընդհատեց թագուհին : Շատ կերպերով կը տարածուի ու կը փոփոխուի ռամկին շողոքորթական խօսքերն : Կ'ախորժիմ երենալինչ որ եմս ստուգիւ, և զիս 'ի մօտանց տեսնողն կարծեմ լաւագոյն կը գտնայ քան ինչ որ կ'աւանդէ համբաւն : Երկնային ծննդեան փառքէն ու մեծամեծ յաղթուն թեանց պարծանքէն աւելի կ'ախորժիմ պատուիլ իմ ժողովրդեանս երջանկութեամբ :

— Փառք Շամիրամայ, կեցցէ՛ յաւիտեան, գոչեցին եռանդեամբ բոլոր հանդիսականք : և Արա ուրախութեամբ միաձայնեցաւ հանդիսականաց : Այդ երջանիկ էր քան զինքը նոյն ժամուն, ոչ որ քան զինքըն աւելի մխիթարեալ :

Անագան էր ժամը, երբ ելաւ նա մեկնելու սրահէն :

— Վաղը, — ըսաւ իրեն թագուհին դաշն ձայնիւ, — վաղը ծանր բաներու վրայ պիտի խօսիմ հետդ :

— Թագուհին պիտի խօսի հետս վաղը, — պատասխանեց պատանին :

— Այո՛, չեն ուզեր :

— Ո՛հ, այո՛. — ըսաւ նա հառաչելով, — բայց Աթոսայի խօսքերն աւելի քաղցր են ինծի :

— Ապերախտ, — գոչեց թագուհին : Զգտա՛ր զԱթոսա Շամիրամայ արքայական պերճանաց տակ : Հայոց թագաւորը պահէ Արայի խօսքերը, և Բաքելոնի թագուհին յիշէ որ կորուսած է իր սիրտը Միլիդայ նուիրական մեհենին մէջ :

կը շարունակուի :

ԱՌԱՄՔ ԱԶԳԱՅԻՆՔ

— Աղբար աղբօր աղբիւրն է, թէ ծառունայ՝ պաղ ջուրն է :

— Աշխարհի մալը աշխարհի կը մնայ :

— Աւեր քաղթին չեն անուն :

— Բանտ մի է աշխարհ, մէջէն պակաս չէ աշխար :

— Բարեւ տունիք՝ խօսեցուցինք, երկու կու տանք ձայնը չի կտրեր :

— Դրացիդ խաղաղ, տունդ ալ խաղաղ :

— Դրացուն խաղը՝ խող կ'երեւայ :

— Երկու ստակի զգեստ է, ինչ կայ չկայ վրաս է :

— Զինչ մտածես, զայն երազես :

— Լաւ ձին գարին կ'աւելցնէ, գէշ ձին դաւնէ :

— Խենդը ունէր բուռ մը չաման, միշտ կը չափէր ամնէ աման :

— Ծուռ ծակը՝ ծուռ չիփի կ'ուզէ :

— Կռուի օրը կռիւ պէտք է, հաշտութեան օրը հաշտութիւն :

— Զուկը ծովումը կը մեծնայ :

— Մահը մահանալով կու դայ :

— Շանը կաղութիւնը մինչև աղուեսի տեսութիւնն է :

— Շատ ձեռք շատ կ'ընէ, երկուսը որչափ կարնայ նէ :

— Ոսկին պզտիկ է գինը մեծ :

— Որ ջուրն զիս կը խեղդէ, ես անոր ծով կ'ասեմ :

— Պարապ մնալէն, դատարկ աշխատիւ լաւ է :

Զուրը չի տեսած, կոշիկս չեմ հաներ :